



## Հ Ն Ի Ց - Ն Ո Ր Ի Ց

(ՀԱՅՈՒԹՎԱԿԱՆ ՈԽԾԽՈՐՈՌՈԹԻՒՆ)



Ա Յ Գ Ե Հ Ա Տ

Հրաշալի է առաւտոը Լոռում ամառնալին ժամանակ. արեւ դեռ նոր երևելով երկնակամարի վերալ, իւր ոսկէփալլ ճաճանչներով սկսում է լուսաւորել Ալգեհատ գիւղը. բնութիւնը զարթել է արդէն. թռչունները ճռուողելով ճախրում են օդի մէջ և երեմն խումբ խումբ իջնելով գետնին հասկ ժողովում իրանց ձագերի համար. Պառաւ նանը կուտ է տալիս իւր շուրջը խմբուած հաւի ձագերին: Դիւղի տղերք ու աղջը կերք մի·մի փալտէ մզրախ ձեռին նստած կամների վերալ կալ են կալսում. առաւտօտեան զեփիւոը գիւղի բազմաթիւ թոնիրներում թխուող լոշերի ու հացերի թարմ հոտը լցրել է ամբողջ շրջակալքը. իսկ վիթիխարի գամփոները գոռում գոչումով շըջապատել են անցուորականին:

Այդ միջոցին ես ու ուղեկիցս ներս ենք մտնում գիւղը: Անցնում ենք գիւղի ծուռնումուոը փողոցներով, գամփոները դէպի մեզ են արշաւում. մենք գիտում ենք կալերը և նոցա մէջ իմ աչքին է ընկնում մի ծանօթ դէմք. — մի միջահասակ տղամարդ, բարեձեւ

կազմուածքով, լարդէ գլխարկը գլխին եռանդով քշում է կալի ձին. լիշեցի, որ դա մեր դպրոցական ընկերութերիցն է, բայց ես արդէն 20 տարի է չեմ տեսել նորան:

Գէորգ Շահվերդեանին տեսնելս շատ բան լիշեցրեց ինձ անցեալից. Ներսիսեան Դպրոցի աշակերտներից մի խուժբ, 72—3 թուերին, երեկոները, ազատամերին սկսել էինք թարգմանութիւններով պարապել. Յովսէփ Աստուածատրեանցը, որ ինձ հետ աւարտելով ուսման լնթացքը՝ երկար տարիներ ուսուցչական պաշտօն վարեց՝ Վաղդիկավկազի և տեղւոյս տզդ. դըպրոցներում և որ գժբախտաբար հոգեկան ծանր ու անքուժելի հիւանդութեան հանդիպելով 1884 թուին՝ ալսօր գտնւում է քաղաքիս Յիմարանոցում, նոյնպէս թարգմանութիւններ էր անում լիշեալ Շահվերդեանի հետ. Նոքա միասին ուսերէնից հայերէնի էին վերածել մի ստուար աշխատութիւն «Գործնական խրատներ մարդուս առաջդութիւնը պահպանելու համար». բայց լետոյ երկպառակութիւն ընկնելով նոցա մէջ՝ թէ ումն է պատկանում այդ թարգմանութիւնը՝ վերջի վերջով լանձնեցին իմ տնօրինութեան, որպիսի ձեռագիրը ալժմէ էլ գտնւում է ինձ մօտ:

Ցիշեցրի Շահվերդեանին այդ գէպէը, ողբացինք մեր քանքարաւոր ընկեր Յովսէփի գժբաղտ վիճակը, որին ընկերական շըջանում «Տուչօ»<sup>1)</sup> էինք անուանում և հարկաւոր տեղեկութիւնները ստանալով նորանից մեր առաջադրած ուղեւորութեան մասին՝ շարունակեցինք մեր ճանապարհը: Սակայն հագիւ անցել էինք քանի մի հարիւր քալ՝ Շահվերդեանը հազաւ մեզ և սիրացիք պատրաստակամութեամբ ուղեկցեց մեզ մինչև երեկոյ:

<sup>1)</sup> Շըջնատ:

Ալգեհատ գիւղը լերան գլխին է, որից անմիջապէս իշնում ենք դէպի արևելք—ալգիները. սոցա մօտ մի ալգետեղ կալ, որ կոչում է «Ճալինենց Տախտ». այս անունը շատ հին պէտք է լինի՝ Տալինենց կամ Լոռու մելիքների և քեալանթարների տիրապետութեան ժամանակից, որովհետեւ վերջին զարերում Ալգեհատն ու Ճրջակալքն արդէն պատկանում են Շահվերդեաններին: Ալգեհատի ընակիչները գաղթած են Ելեանեան Բջնի գիւղից, բոլորն էլ Մելիք Դուրմիշխանի որդիքն են և սերունդները, որոնք այժմ կոչւում են Շահվերդեանները: Ալպէս ուրեմն գրեթէ ամբողջ գիւղի ընակիչները կազմում են միայն նոքա: Պատմում են, որ Շահվերդի անունը ծագել է Շահ—վերդի, ալսինքն «Շահի տուած» բառերից, որովհետեւ գաղթելուց և այդտեղ ընակուելուց լեռոյ՝ սովորութիւն է դառել ալգալէս անուանել նոցա:

Ալգեհատի զառիվայրի վերայ բացւում է ուղեսորի առաջ լուշարձանների, տապանների, խաչքաղերի և մատուռների մի կատարեալ ցուցահանդէս բաւական ընդարձակ տարածութեամբ: Ալգեհատի և «Դիմաց տան» մէջտեղ գտնուում է մի հրաշալի խաչքար, խաչաձև, որ տապացին բերուած է Դսեղու ս. Գրիգորից. գեղեցիկ քանդակործութիւնը ձևացնում է տասներկու առաքեալների և մէջ տեղը Տիրամօր պատկերներ, իսկ խաչեցուրջը ընդարձակ արձանագրութիւն, որից մնացել են միայն ալսքանը Ռոաճնորդն փայլե... լքունք մէ.. խաւս լեր Պոօշին բախտա... ունեն սուկանն..դ...ասլա... ողորմութեամբ պարոն Գուրգինյ կանգնեցաք սուրբ թնդանօթի գնդակների բազմաթիւ տեղերը ցոյց էն տալիս, որ խաչքարը վկալ է եղել պատերազմների:

Ալգիների արևմտեան կողմը մի փոքր հնաշէն ե-  
կեղեցի կալ, Գոզօթ անունով. տեղացիները կարծում  
են, որ այլպէս է կոչւում Գողգոթալի նմանութիւն ու-  
նենալու պատճառով։ Եկեղեցու դրան ճակատին հին ար-  
ձանագրութիւնից մնացել է + ի թու Ոչի, իսկ մնա-  
ցեալը քերուած է և տեղը նոր գրուած, տղէտ գրչէ  
գործ և ալսքան միալն հազիւ ընթեռնլի.

**Ես միջիս որդի ացեհս... մամքնա... ոսմրլ..  
ծին**

+ յիշեա քրիստոս աստուած զսամել և զծնաւ-  
ղլս իմ ի զալստեան քում

Այս արձանագրութեան համար ասում են, որ դո-  
րա վերալ գրուած է եղել Ալգեհատի կալուածների հին  
սահմանները, իսկ Օձնեցի Դալլաքանց Գրիգորը կալուա-  
ծական վէճ ունենալով Ալգեհատցիների հետ՝ եղծել է  
հինը և փոխարէնը գրել տուել վերոյիշեալը։

Կէս ժամ ճանապարհ գնալով անդնդախոր մի ձո-  
րի մօտ, սարի լանջի վերալ գտնւում են «Քոբալը» հի-  
նաւուրց վանքի աւերակները։

Քաբալը վանքը մի քանի վիթխարի շինութիւն-  
նելից է բաղկացած՝ տաճարը, գաւիթը կամ սրահը ևն,  
որոնց վերալ ոչ մի արձանագրութիւն չենք գտնում,  
բացի միայն ժամանակով բաւական ուշ գրուած մի յու-  
նարէն արձանագրութիւնից. բայց մեր մատենագիրնե-  
րից Վարդանը լիշում է նորան, դեռ տասներկուերորդ  
դարում, թէ ինչպէս Յովհաննէս սարկաւագ վարդապե-  
տը Հաղբատից զգուշական խրատներ է գրում Քոբալը  
վանքում կրօնաւորեալ Խորասու և Մարիամ թագաւո-  
րազն կանանց. նոյն դարում լիշում է նաև Դաւիթ  
Քոբալեցի մատենագիրը և վերջապէս Քոբալը վանքի  
արևելեան կողմը, գըեթէ վանքի բակում, ժայռի հան-

գեղ գեռ ալսօր էլ դանւում է մի մատուռ, որի վերաբ  
պահպանուած արձանազրութիւնները նոյնպէս մինչեւ-  
տասներկուերորդ դարն են հասցնում իրանց գոյութիւնը:  
Արևմտեան դռան մօտ.

+ **Թ. ՈՂԵ** ես խաչզոզս մամքնանոցս կագ-  
նեցի զբրմիսա զիսե բեմբո (<sup>շ</sup>) ի սուրբ կա-  
թողիկես վասն իմ հոգոյս առաջնորդ ողջին  
(<sup>շ</sup>) ի սուրբ եկեղեցոյս պարտի ինձ տարին  
ք աւր ժամ որ խափանէ իմ մեղացս տեր է  
առաջի աստուծոյ. ամեն.

Եկեղեցու ճակատին՝ տղեղնաձեւ.

+ Քս ած յիշեա զմարիամ և զուասուզան ի  
գալստեան քում.

ՈԲ ես մարիամ զուատը Կիւրիկէի թագաւո-  
րի յազգէ Բագրատունի շինեցի զսուրբ կա-  
թողիկէս աւգնութեամբ +Ե՞ր իմո ուսասուզա-  
նա յիշատակ մեզ և ծնողաց մերոց եւ հաւ-  
րաքնիր մերո ուսասուզանա եւ եղբաւը մերո  
աքասա որք երկրպագէք քրիստոսի ի սուրբ  
քաւարանիս յիշեսջիք ի քրիստոս զի վասն  
նեղութեան տեղւոյս շատ աշխատեցա (<sup>ք</sup>):

Եւ ճշմարիտ որ հէնց ժայռի բերանին է կառու-  
ցուած մի այնպիսի տեղ, ուր ամեն մարդ չէ կարող ա-  
ներկիւդ մերձենալ նորան:

Կիւսիսալին պատի վերալ.

Ես Գինէմիայ բանեցայ սուրբ կաթուղիկէիս  
զին (<sup>շ</sup>) ճար կայր եւ զքառասնիցն ա աւր  
պատարագ ինձ ետուն որ խանգարէ որոշ  
աստուծոյ..... շաւրհնած է

Մի ընդարձակ արձանագրութիւն կալ դրան մօտ պատի մեծ քարի վերալ, բայց առջեր շինուած լինելով մի նոր փոքր մատուռ, արձանագրութեան մեծ մասը ծածկուած է շինուածքի ետեր, որ թէպէտ ալժմ կի-սաքանդ, բայց և այնպէս արգելում է կարդալ այն։

Ասացինք, որ բուն տաճարի և յարակից շինութեանց վերալ ուրիշ արձանագրութիւն չկալ, եթէ չուզենանք նշանակութիւն տալ գաւթի արևմտեան ճակատին փորագրուած ՄԽԻ տառերին, բայց և այնպէս Բագրատու-նեան լիշեալ մատուռն էլ արդքան մերձ լինելով նորան, կարծում ենք թէ բաւական պարզում է Քոբալթի շինու-թեան ժամանակն ու այլ հանդամանքները։

Մեր ընկերները, որոնք խմբուել էին արդտեղ, նը-կարեցին շինութեանց օրինակելի մասերը և արևից միան-գամալն խաշուած շարունակեցինք մեր ճանապարհը ա-նտառի միջով, որի մէջ ձորում ժայռերից գոյացած ահա-պին հեղեղատի միջով ահեղագոչ հոսանքներով թափում էր մի մեծ առուակի։ Ոտքով, սոսկալի տապից թուլացած, սալթաքելով և գլորուելով ճղում էինք մեզ համար ան-տառի խճողուած ճիւղերի միջից մի շաւիդ։ բայց հալ-րենի հնութեանց սէրը, նոցա տեսնելու բուռն ցանկու-թիւնը քաղցրացնում էր մեր ճանապարհը։

Քոբալթից ոչ շատ հեռու գտնւում է այն խաչքա-ը, որի վերալ Սարգիս արքեպիսկոպոս Զալալեանը կար-դացել էր այս արձանագրութիւնը. (Ճան. ա. 102).

Ի թուին Հայոց ՈՂԴ. ի յանցեալ ժամա-նակաց և ի կարճել յաւուրցս ես Արևշահ հանդերձ ամուսնաւ իմով կանգնեցաք զնշանս Քրիստոսի առ ի յիշատակ հոգւոց մերոց և տւի իմ դրամագին այզի յետ իմ անցման այս սուրբ եկեղեցւոյս. քահանայն ո զպտուղն ստա-

նայ, պարտի տարւոջն բ պատարագ առնել.

Հետաքըքըութեան համար առաջ ենք բերում արտակարգ կանոնադրութիւնը, ինչպէս որ նա կայ ալժմ և պարզ էլ կարգացւում է և որ հիմնական տարբերութիւններ ունի առաջնից.—

Ի թուին Հայոց ոլդ. ի յանցեալ ժամանակաց և ի կարճել աւուրցս ես Արեշահ հանդերձ ամուսնաւ իմով կանգնեցաք զնշանս Քրիստոսի առ ի յիշատակ հոգոց մերոց և ետվի զիմ գրամայգին այգին ի հետ իմ անցման ի յաս սուրբ եկեղեցիս քահանա որ զպտուղն ստանա պարտի տարումն բ ժամ:

Ահա Քոբայրից դէպ հարաւ խիտ անտառի մէջ երեաց մի եկեղեցի, որ կոչում է Զիթախանց եկեղեցի, թէպէտ բարձիթող արած և ամայի. մօտենում ենք մի կերպով, բայց արդէն նա զուրկ էր որև է արձանագրութիւնից. ժողովրդի բերանումն է միայն պահպանուել նորա կառուցանողների անուան լիշտակը:

## Է

### ԳԱՐԻՆ. ՈՒ ՄԱՐՑ

Օքը երեկոյանում էր արդէն և մեր խումբը մերձակալ մի ալգում ճաշելուց և հանգիստ առնելուց լետոյ՝ բաժան բաժան եղաւ դարձեալ, Ղարաքիլիսակում միանալու պայմանով:

Ես և ընկերս ձի հեծնելով անտառի միջով լեռան զառիվալրի վերալ սկսանք առաջ ընթանալ, բայց այս անգամ արդէն ոչ մենք էինք իմանում թէ դէպի ուր է տանում այն ոլորապտոյտ շաւեղը, ոչ մեր ուղեցոյց գիւղացին և ոչ իսկ հետներս ունեցած հինգ վերստա-

նոց քարտէսով կարելի եղաւ որոշել. գնացինք սակայն մի քանի ժամ շարունակ ձիով և ոտով.

—Այ տղալ, ուր ենք գնում ալժմ, հարցրինք մենք.

—Ա. Գրիգորալ վանքը, պատասխանեց անփորձ գիւղացին:

Բայց ընազդմամբ մենք հաշում էինք, որ ալդ-պէս չպիտի լինէր, ո. Գրիգորը մենք թողել էինք մեր աջ կողմը, ձորի աջ թևի վերալ. իսկ մենք գնում էինք դէսլի ձախ, հաւանօրէն դէսլի Քարինջ և Մարց: Եւ անտառում մեզ հանդիպած մի պարոն, Ալգեհատի բնակիչ Քոչարեանցը մեր կասկածը փարատելով՝ հաւաստեց, որ Քարինջ դիւղի ստորոտումն էինք գտնուում մենք արդէն:

Հազիւ 1—2 վերստ էր մնացել մինչեւ Քարինջ գիւղը, անտառներն սկսան սպառուիլ, արևելեան կողմը ձգուած լերկ ժալուերը երևացին և հետզհետէ սկսան տեղի տալ հանքալին լեռներին, որոնց միջից ծորացող և հոսող բազմերանգ ջրերը պարզ ապացուց էին տալիս, որ ալդ լեռները տեսակ տեսակ հանքերի անսպառ շտեմարան պիտի լինէին:

Եւ իրօք Փրանսիական քանի մի ընկերութեանց մասնախմբեր գննում էին այս ու այն կողմ հանքերէ հետքեր գտնելու:

Երեկոլեան դէմ հասանք Քարինջ, որ բլրի վերալ շինուած մի նոր գիւղ է, ընդամենը 52 տարուալ հաստատուած. գիւղը բաղկացած է ընդամենը 50 տնից, բոլորն էլ հալ, որոնք գաղթել են մերձակալ Մարց գիւղից տեղի սակաւութեան պատճառով և վանքի կամ կալուածատէրերի ստրկութիւնից ազատուելու համար:

Պարզ է, որ Քարինջ անունն էլ գիւղը ստացել է շուրջը գտնուած ահռելի քարաժալուերից ու քարակուտերից:

Իբրև նոր գիւղ՝ հետաքրքրութեան արժանի մէրան չտեսանք այնտեղ, ունին մի խղճուկ եկեղեցի, մի քահանայ, նորընծալ տ. Կարապետ, յետին աղքատին վիճակի մէջ, որի խրճիթը ոչ դուռն ունէր և ոչ լրւսամուտներ անդամ... ծողովուրդն էլ մի առանձին բարեկեցիկ վիճակ չունէր. իբրև լեռնաբնակներ պարապում են անասնապահութեամբ և շատ քիչ երկրագործութեամբ:

Մենք չկարողացանք իսկոյն գիւղի քահանալին տեսնել, որովհետեւ նա կէս օրտվար գետին կէսրովի վարած լինելով մի գիւղացու հետ՝ ստիպուած էր եղել երեք վերստի չափ հեռու տեղ զնալ ամբողջ օրով և անձամբ հնձել իւր մասը, որից յետոյ պէտք է մի ուրիշ գիւղացու խնդրէր, որ կէս օրավարի իւր բաժին կէսը կալսէր՝ դարմանը որպէս վարձ տալով նորան, և այս էր լինելու նորա բազմանդամ գերդաստանի ապրուստի մեծ մասը...

Ե՛հ, ով գիտէ, եթէ մարդ մանգայ, գեռ էլի թնչանօրինակ խեղճութիւնների և գրեթէ թշուառութիւնների պիտի հանդիսի մեր գիւղերում:

Երեկոյեան հովը զովացնում էր մեզ օրուալ տօթից ու տապից խաշուածներիս. մթնում էր արդէն, բայց և հանդէպի բլրի գլխին երեսում էր Մարց գիւղ. մի ձոր էր միայն բաժանում երկուսն իրարից.

— Ինչքան հեռու կլինի Մարցը Քարինջից, հարցրինք մենք առաջին պատահող գիւղացուց.

— Կէս վերստ էլ չի ըլլի, պատասխանեց նա մեզ Կարող էք ներկայացնել Ձեզ գիւղացու հասկացողութիւնը վերստի մտսին, եթէ ասեմ, որ մենք աւելի քան մի ժամ ճանապարհ գնացինք ուղիղ գծով, մինչեւ որ հասանք Մարց և մեր հաշուով երկու գիւղերութեամբ:

Հեռաւորութիւնը միմեանցից առ նուազն երեք վերստ  
պիտի լինէր: — Բայց այսպէս են միշտ գիւղացիք: — «այ,  
հրէ ըստեղ ա, գնանք», ասում է քեզ և քաշ տալիս  
ոտով: գնում ես, գնում, և ըստեղը չէ հատնում, ժա-  
մերից լետոյ հազիւ ես տեղ հասնում:

Երբ Մարց հասանք՝ լաւ մութն էր արդէն և մենք  
մեր քալիերը ուղղեցինք գէպի տեղւոյն քահանալի տունը:

Մեր մարց գալու նպատակը լինելով մօտակայ Սօ-  
թալ սարի հռչակաւոր ալրը գիտելը, տէր Բարսեղին  
տեսնելուն պէս առաջին գործերս եղաւ թախանձել, որ  
մի ձիաւոր ուղարկի գիշերանց մինչեւ լիշեալ ալրը և  
իմանալ թէ ինչ կերպով կամ որ ճանապարհով և ինչ  
պատրաստութեամբ կարելի էր մեղ միւս օրը գնալ ալ-  
րը գիտելու: Ենորհակալ ենք, տէր հայրը անմիջապէս  
մեզ լուր տուաւ, որ կարգադրուած է առաւօտանց մեր  
ձիերից մէկով մի մարդ ուղարկել, որի համար և պա-  
հանջեց մեզանից քառասուն կոպէկ վարձ:

Ապա մենք իմացանք, որ 40 կոպէկով վարձուած  
մարդը ոչ ալլ ոք էր, բայց եթէ տէր հօր եղբայրը,  
որ իւր տանն իսկ ապրում էր և մեզ հիւրընկալում:

Ալդ գիշերը տ. հայրը մեզ հիւրասիրեց իւր տանը  
գիւղին վայել եղանակով: Նա նոր բնակարան էր շինել  
իւր համար, որոնցից ընդունարանը տուեց մեզ. դա-  
զարդարուած էր շատ պարզ ոճով: պատերից տանըցոց  
նոր հագուստները կախ, ինքնաեռն ու թէլի սարքը  
թարեքի վերալ, որպէս նշան քաղաքակրթութեան, մի  
քանի ընտանեկան կարասիներ և այս ամենի մէջ քա-  
ղաքից բերուած՝ եւրոպական փոքրիկ կօշիկները նոցա-  
մօտ ի ցոյց գրուած գրան հանդիպակաց պատի մէջ  
տեղի թարեքի վերալ: Սենեակը զարդարուած է մի քա-  
նի տեղական գործուածք կապերտներով, որոնք բաւա-  
կան կոշտ ու հաստ են, բայց կալ և մէջը բաւական:

նուրբը դարձեալ տեղական գործ։ Առհասարակ Գու-  
դարքի բոլոր գիւղերում անծանօթի աչքին ամենից ա-  
ռաջ ընկնում է գորդ գործելու գործիքը, որ կազմում  
է տեղական օրիորդների և հարսների միակ սիրելի պա-  
րապմունքը։ Սովորութիւն կալ այդ գիւղերում, որ ա-  
մեն աղջիկ մի կապերտ կամ գորդ է գործում, որ  
ապագալում նորա մալը նուիրաբերում է իւր փեսալին  
իրեւ երեստեսնունք։ Տէր հալը առանձին բաւակա-  
նութեամբ ցոյց տուեց մեզ իւր ընդունարանի ընտիք  
գորդը որպէս իւր զոքանչի ալդպիսի մի նուէր։

Ես և իմ ընկեր Գաբրիէլեանը վալելելով պատ-  
րաստակամ տանտիրոջ և գործունեալ երեցկնոջ հիւրա-  
սիրութիւնը, հանգիստ առանք նոյնտեղ, բայց չնայե-  
լով որ դա գիւղի լաւագոյն տունն էր և մեզ շնորհ  
էին արել ընձեռել եղած ամենալաւ անկողինները, սա-  
կայն և այնպէս ամբողջ գիշերուալ մէջ ես թերես մի  
ժամի չափ քնեցի, իսկ ողորմելի ընկերս հսկումն կա-  
տարեց մինչև լուս, պատերազմ մղելով իւր վերայ ամեն  
կողմից կուտակուած բնութեան գազանիկների հետ։  
Նունչ առանք միայն այն ժամանակ, երբ լուսաբացին  
տանտէրը բարի լոյտ մաղթեց մեզ՝ անոյշ քնից լեռու։

Դուրս եկանք պատշտամբը և այդ ժամանակ մի-  
այն իմացանք, որ գիշերն անց ենք կացրել նոյն իսկ  
բնութեան ծոցում, այնքան գեղարուեստական էր Մարց  
գիւղի տեղադրութիւնը։ Ի զուր է Զալալեանի ճանա-  
պարհորդութիւնը համարում դրան ցանկարմար վալրի։  
սարի լանջի վերայ երեսը դէպի հարաւարեմուտք դարձ-  
րած փուռած են գիւղի տնակներն ու խրճիթները, ա-  
րևմտից անցնում է Բաբաջանի ձորի միջով համանուն  
գետակը, իսկ գետի միւս ափից սկսում է մալրիների  
մի ալնպիսի խիտ ու անանցանելի անտառ, որ տեսնո-  
ղի վերայ սարսափ կարող է ազդել։

Մարցը իւր ամբողջ շրջակալ հարուստ կալուած-ներով մինչև գարուս կէսը սեպհականութիւն էր Օձ-նալ վանքի, մի աւանդութիւն ասում է, թէ սկզբում գա պատկանելիս է եղել Յովհան Օձնեցուն և նորա ցեղին. իսկ վերջերս նորա մի մասը անցել է ս. Եղ-միածնի տիրապետութեան:

Գիւղում առանձին հնութիւն չկար. մեր միակ յուսը Սօթի հռչակաւոր ալրն էր. բայց մեր համբաւա-բերը լուր բերեց, թէ այնտեղ ալդ տեսակ ալր ամե-նեին չէ տեսել նա և ուրեմն ի զուր տեղը պէտք չէր մեր գնալն այնտեղ: Թէպէտ Լոռուալ մի ծայրից մին-չե միւսը մենք շարունակ լսել էինք ալդ ալրի մասին, որտեղից մինչեւ անգամ թուշունները երբեմն հուլունք-ներ, ապարանջան և կտպերտի կտորտանք էին հանել և թափել դուրս, բայց և այնպէս հաւատալով բանբե-րն համոզիչ խօսքերին՝ ցաւ ի սիրտ ստիպուեցանք թողնել մեր ալդ մտադրութիւնը և հեռանալ Մարցից, մի ուրիշ անգամոււան թողնելով մեր ալդ դիտաւորու-թեան իրագործումը:

## Բ.

## ԴԵՊԻ Ա. ԳՐԻԳՈՐ

Թէպէտ այս անգամ լատուկ ուղեցոյցը ցոյց տուեց մեզ ս. Գրիգոր տանող սալլի լալն ճանապարհը, բայց մենք գարձեալ մոլորուեցանք և երկու ժամի չափ ան-նպատակ թափառելուց յետոյ հովասուն և ծառախիտ անտառներում, հազիւ մի մարդու շունք գտանք այն-տեղ, որից գոնէ կարող էինք հարցնել մեր ցանկացած ճանապարհը.

— Հրիես, հրիես, ձայն տուեց մեզ փոքրիկ խոզա-

բած Մատթէոսը, որ առջեն արած մի քանի գեր ու պարարտ խոզ էր մանրիկ խոճկորներով՝ բերել էր ջուր խմացնելու մի ականակիտ ու վճիտ աղբիւրի մօտ, որը ահագին բարձրութիւնից ջրվէժի նման թափւում էր ծառերի միջից:—Նըլե՞ս, էն ա, ըևըմա:

Մի հետաքրքիր հանգամանք:—Ալսօր մեր գըական լեզում Ե և Է տառը բառի մէջ և վերջը միակերպ ենք հնչում. մինչդեռ մի քանի գաւառներում, օր. հէնց Լոռիում Ե հնչում են ԻԵ. ինչպէս արտասանեց վերս- լիշեալ պստիկ խոզարածը հըես բառի մէջ՝ հըե՞ս հըն- չենով: Կարծում ենք կարեորութիւնից զուրկ չէ այն պարագան, որ տասներկուերորդ դարումն էլ Ե տառը հէնց ալդպէս էլ հնչուել Է՝ ԻԵ, ինչպէս ալդ երկում է վերը առաջ բերած՝ Հայոց ՈԲ և փրկչական 1153 թ. Քոբայրի մատրան ճակատին փորուած արձանագրութիւ- նից, ուր փոխանակ գրելու քէր, հաւրաքեր՝ արձանա- գրել են միենոյն ձևով, ինչպէս որ հնչում են եղել՝ ժիե՞ր, հաւրաքիե՞ր:

Զովանալով աղբիւրի ջրով՝ մենք մի փոքր հան- գիստ առանք աղբիւրի դալարագեղ շրջակալքում. շու- տով մօտեցան մեզ խոզարած Մատթէոսը և իւր երկու ընկերները:

—Ա՛ տղալ, անունդ Բնէ Է, հարցրեց նորան իմ ընկերակիցը:

—Մաթոս, պատասխանեց նա վախվխելով:

—Ում որդին ես:

—Հաբէգանց Աթոլի տղէն իմ էլի:

—Ա՛ Մաթոս...

—Հ...՝

—Ինչի՞ ես հը ասում, խի՞ չես ասում հըմէ.

—Դէ էդքանը գիդեցել չեմ:

Փոքր ինչ լետոյ՝

— Մաթնս.

— Հը...

— Ե՛լի հ'ը, բա իմ չես ասում հրամէ:

— Մտիցս ընկնում ա է:

Մի քիչ յետով դարձեալ անհանգստացրինք Մաթոսին:

— Մաթնս:

— Էս հետը միտս ա, հ'ը, համէ:

— Նաքարը ծամէ: — Ա՛յ Մաթնս, կուզես կարդալ:

— Ի՞ն չեմ ուզի:

— Կարդալը լաւ բան ա:

— Բա լաւ չի:

— Ինչի՞ ա լաւ:

— Դէ դու կարենում ես էս գրերը ջոկել, ես չեմ

կարում:

— Քանի՞ խոզ ունիս:

— Քսան հատ ա:

— Բա Յարութը՞ քանի հատ ունի:

— Նրանն էլ ա քսան:

— Բա Արմալիսը քանիսն ունի:

— Նրանն էլ ա քսան:

— Բա գելերը չեն ուտում:

— Խի՞ բա մենք ընչացու ենք, որ գելերը պտի

ուտեն:

Գողարիկ և աչքաբաց 8 տարեկան Մաթոսին ու իւր ընկերներին հիւրասիրեցինք քաղցրեղէնով և ուղիղ դէ-պի ս. Գրիգոր:

Դժբաղտութիւն ունեցանք տեսնել ս. Գրիգորի վանքերի կոյտը և երանէ թէ ամեննեին չտեսնէինք: Ո՞ր հալ քրիստոնեան առանց արտասուքի կարող է նայել և առանց սրտից արիւն կաթելու դիտել ալն մի խումբ հրաշալիքները, որ գահավէժ թափուած են իրար վերալ, ալն սքանչելակերտ կամարները, ամենաճարտար

գեղարուեստին զարմացնող քանդակներն ու մողալիքները, անթիւ և իրար վրայ կուտուած երկաթագիր արձանագրութիւնները, բարձրանիստ և միապաղադ սիւները, որոնց կարծես մարդկալին ձեռք չէ կանգնել, այլ հրաշքով են խոյացել ալդ վալրենի և ամալի վալրում...

Մենք այս թուուցիկ տպաւորութիւնների մէջ չենք ուզում զբաղեցնել մեր ընթերցողներին դոցա մանրամասն նկարագրութեամբ, որոնք մեր մի ուրիշ աշխատութեան նիւթ են լինելու, ասենք միայն, որ հարիւրաւոր արձանագրութիւններ դոցա հնութիւնը տանում հասցնում են տասներեքերորդ դարի սկզբներին:

Գ.իւտ. ա. բահ. Սաղանեանց.

